ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկի գյուղական համայնքի բնակչության ընդհանուր ժողովի

13.07.2011թ.
գ. Այգեկ

Ժողովի նախագահ՝ համայնքի ղեկավարի տեղակալ Մ. Աբրահամյան

քարտուղար՝ աշխատակազմի քարտուղար Գ. Սարգսյան

մասնակիցներ՝ մարզպետարանի ներկայացուցիչ՝ Գ. Ղազարյան,

համայնքի 32 բնակիչ:

Լսեցին – Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղական համայնքի ղեկավարի 2011 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությունը՝ բյուջեի կատարողականի և կատարված աշխատանքների վերաբերյալ /զեկ. համայնքի ղեկավար՝ Վ. Աբրահամյան/:

Կից ներկայացվում է հաշվետվությունը:

Ժողովի նախագահ՝ Մ. Աբրահամյան

Ժողովի քարտուղար՝ Գ. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի 2011 թվականի առաջին կիսամյակի բյուջեի կատարողականը՝

Վարչական մասով եկամուտների հաշվարկը կազմում է 1-ին կիսամյակի համար 12312,1 հազար դրամ, որտեղ սեփական եկամուտները 2564,3 հազար դրամ է, որից հավաքագրվել և բյուջե է մուտքագրվել 2599,4 հազար դրամ, որը կազմում է 101,4 %.

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

հազար դրամ

		Տարեկան պլան	Հաշվետու ժամանակաշրջան		
			Հաշվարկային պլան	Փաստացի	Տոկոս
ա)	հողի հարկ	1861,0	930,0	945,2	101,6%
բ)	գ/հարկ շինություններ	522,5	261,0	272,6	104,4%
գ)	գ/հարկ փոխադրամիջոցներ	1659,2	1239,3	1246,4	100,6%
դ)	տեղական տուրք	204,0	102,0	110,8	108,6%
ե)	տեղ. տուրք շին. թույլտվ.	30,0	15,0	7,4	49,3%
զ)	վարձակալական հ/հարկ	18,9	17,0	17,0	100,0%
է)	տարեսկզբի ազատ մնացորդ	2261,9	2261,9	---	---
ը)	դոտացիա	19425,4	9712,7	9712,7	100,0%
թ)	հողի օտարումից եկամուտ	0,0	0,0	248,4	---
ԸՆԴԱՄԵՆԸ		25982,9	14538,8	14822,4	101,9%

ԾԱԽՍԵՐ

ա) Աշխատավարձ – պլանային 4275,4 հազ. դրամ - փաստացի 4275,4 հազ. դրամ – 100,0%,

բ) սոց. վճար - - - - - - - - - - - - 886,3 հազ. դրամ - - - - - - - - - - 886,3 հազ. դրամ - 100,0%,

գ) սուբսիդիա - - - - - - - - - - - 3180,0 հազ. դրամ - - - - - - - - - 3180,0 հազ. դրամ - 100,0%,

դ) սոց. օգնություն - - - - - - - 100,0 հազ. դրամ - - - - - - - - - - - 100,0 հազ. դրամ - 100,0%,

ե) տեղեկատվական ծառ. - - - - 240,8 հազ. դրամ - - - - - - - - - - 240,8 հազ. դրամ -100,0%,

զ) մշակութային ծառայություն- - 600,0 հազ. դրամ - - - - - - - - - 420,2 հազ. դրամ - 70,0%,

է) այլ ծառայություններ - - - - - - - 1650,3 հազ. դրամ - - - - - - - - 757,0 հազ. դրամ – 46,0%,

ը) աղբահանություն - - - - - - - 498,0 հազ. դրամ - - - - - - - - - - - 415,0 հազ. դրամ – 83,0%,

թ) Ոռոգման համակարգի վերականգնում – 2999,1 հազ.դրամ - - 2999,1 հազ. դրամ – 100,0%,

---

Ընդամենը - - - - - - - - - - 14429,9հազ. դրամ, - - - - - 13273,8 հազ. դրամ – 92,0%:

2. 2011 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքները.

1. Հրավիրվել և անցկացվել է ավագանու 6 նիստ՝ 3 հերթական, 3 արտահերթ ավագանու կանոնակարգով սահմանված կարգով:
2. Ընդունվել է համայնքի ղեկավարի 13 որոշում, արձակվել՝ 7 կարգադրություն:
3. Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից կայացվել է 1 որոշում:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան և այլ կազմակերպություններ են ուղարկվել 111 գրություններ:
5. Բնակիչներին տրամադրվել են 295 տարբեր բնույթի տեղեկանքներ:
6. Կատարվել է քաղաքացիների ընդունելություն, քննության է առնվել նրանց առաջարկությունները, դիմումները, ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ դրանց լուծման ուղղությամբ:
7. Ապրիլի 7-ի Մայրության և գեղեցկության տոնի առթիվ, չխախտելով ավանդույթը, համայնքի 122 կանանց՝ թոշակառու մայրերի, գյուղապետարանի, մանկապարտեզի, դպրոցի, բուժկետի աշխատողների համար 350,0 հազար դրամով գնվել են նվերներ:
8. Մայիսի 9-ի՝ Հաղթանակի և խաղաղության տոնի կապակցությամբ Հայրենական մեծ պատերազմի 2 վետերանների տրամադրվել է դրամական օգնություն՝ 60,0 հազար դրամ:
9. Համայնքի 1 անապահով ընտանիքի տրամադրվել է 40,0 հազար դրամ սոց. օգնություն:
10. Ավարտին է հասցվել ոռոգման ներտնտեսային ցանցի վերականգնումը, որի համար փոխանցվել է 15% համաֆինանսավորմամբ ներդրման մնացած 2999,1 հազ. դրամը:
11. Մշակույթի տանը պատկանող գույքից 80 հատ աթոռ նվիրաբերվել է դպրոցին:
12. Կազմակերպվել և անցկացվել է համայնքային շաբաթօրյակ և ծառատունկ՝ ավագանու, համայնքի ղեկավարի աշխատակազմի, մանկապարտեզի աշխատակիցների, համայնքի բնակիչների մասնակցությամբ: Տնկվել է 150 հատ բարդի և 50 հատ թուփ:
13. 2011 թվականի ապրիլի 15-ից 25-ը կատարվել են մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումներ 100հա-ի վրա, որի համար ծախսվել է «Բույսերի պաշտպանության միջոցառումներ» ծրագրի շրջանակներում մարզպետարանից անհատույց ստացված 12,5կգ ցինկի ֆոսֆիդ տեսակի մկնասպան միջոցը:

14. Պարբերաբար 7 օրը մեկ իրականացվել է աղբահանություն:

15. Աշխատավարձի և պարտադիր սոց. վճարների գծով պարտքեր չկան:

Առաջնային հիմնախնդիրներից է՝

1. *Համայնքային ճանապարհների վերանորոգում:*
2. *Մշակույթի տան նոր դահլիճի կառուցում:*
3. *Գերեզմանատան ցանկապատում և ոռոգման ցանցի անցկացում:*
4. *Համայնքի միջդաշտային ճանապարհների վերականգնում:*

Այգեկ համայնքի ղեկավար՝ Վ. Աբրահամյան

2011 թվականի հուլիսի 13

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզ գ. Այգեկ